

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/5

14 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գասպար Վասիլյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 10.04.2014 թ-ի թիվ 42 որոշման դեմ:

Ա/Ձ Գասպար Վասիլյանի գանգատում բերված փաստարկները.

16.04.2014 թ-ին Ա/Ձ Գասպար Վասիլյանը ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի տարածքային հարկային տեսչության 10.04.2014 թ-ի թիվ 42 որոշումը, որով առաջադրվել է 453.044 դրամ պարտավորություն:

Ա/Ձ Գասպար Վասիլյանը տեղեկացնում է, որ 2005 թ-ի ապրիլ ամսից մինչ օրս գործունեություն ընդհանրապես չի իրականացրել: Տվյալ դեպքում իրեն վերը նշված որոշման համաձայն առաջադրվել է պարտադիր սոցիալական ապահովության վճարի 2009-2012 թվականների համար 371.422 դրամ պարտավորություն, որի վերաբերյալ ընդհանրապես տեղյակ չի եղել:

Ա/Ձ Գասպար Վասիլյանի կարծիքով հարկային տեսչությունը պարտավոր էր իր նկատմամբ մինչև 31.12.2012 թվականն ընկած ժամանակահատվածում կիրառել «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը և 2006 թ-ի հունվարից իր նկատմամբ նվազագույն սոցիալական վճարների գումարներ չհաշվարկել:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Ա/Ձ Գասպար Վասիլյանը խնդրում է մասնակի՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարի մասով (371.422 դրամ), բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 10.04.2014թ-ի թիվ 42 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Գասպար Վասիլյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 10.04.2014 թ-ին ընդունել է թիվ 42 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 07.04.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Գասպար Վասիլյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 453.044 դրամ, որը բաղկացած է հետևյալ պարտավորություններից.

48620 դրամն առաջադրվել է 30.10.2001 թ-ի թիվ 007967 ստուգման ակտով, 14892 դրամը հաստատագրված վճարի ելակետային տվյալների հայտարարություններով հաշվարկված գումարները սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերն են, 18110 դրամը 17.06.2004 թ-ի թիվ 233918 ստուգման

ակտով առաջադրված տուգանքի 10% է, իսկ 371.422 դրամը 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարներն են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 10.04.2014 թ-ին ընդունել է թիվ 42 որոշումը՝ Ա/Ձ Գասպար Վասիլյանից 453.044 դրամ գանձելու վերաբերյալ:

Ինչ վերաբերվում է գանգատում նշված այն պնդմանը, որ Ա/Ձ Գասպար Վասիլյանի նկատմամբ պետք է կիրառվեն «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը և 2006 թ-ի հունվարից նվազագույն սոցիալական վճարների գումարներ չհաշվարկվեին, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա»:

Քննարկվող դեպքում 11.11.2005 թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթները Ա/Ձ Գասպար Վասիլյանի նկատմամբ չէին կարող կիրառվել, քանի որ եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարներից բացի Ա/Ձ Գասպար Վասիլյանը պարտավորություններ է ունեցել նաև հարկային մարմնի կողմից վերահսկվող այլ եկամուտների գծով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Աշտարակի ՏՀՏ պետի 10.04.2014 թ-ի թիվ 42 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

